

ՀԱՏԸ 5 ՄԻԼԻԷՄ

ԲԱԺԱՆԵԳԻՆ

		Տարեկան	Վեցամսեայ
ԵԳԻՊՏՈՍ	Ղ. Ո.	80	40
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	Ֆր.	20	10

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

ԱՐՏՕՆԱՏԷՐ՝ ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ ՇԱՀԵՐՈՒ ՕՐԳԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ եւ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ
Շարա Ապու Տարտար, Թիւ 16
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ՀԱՍՑԷ
Journal AREV
B. P. № 600
Alexandrie, EGYPTE

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳՐԱՊԵՏ՝ ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

ԱՆԱՊԱՏԷՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Գ.

«Հայկական Ռազմաճակատ» բացատրութիւնը իբրեւ իրականութիւն լացնելիք պատկեր մըն է այսօրուան օրս, բայց իբրեւ բացատրութիւն՝ կ'երեւայ թէ ծայրերուն վրայ ան կը պահէ տակաւին իր մեծ հըմայքը։ Անոնց համար, ի՛նչ վիճակի մէջ կ'ուզէ թո՛ղ ըլլայ, «ռազմաճակատ» մըն է ան, որ իրենցն է, ուրիշինը չէ։ Ուրիշներ կրնան և պէտք են անով հետաքրքրուիլ՝ միմիայն «տուրք» վճարելու համար անոր։ Ատկէ անդին, պէտք չէ բանի խառնուիլ, պէտք չէ փնտռել գործին ո՛չ անցեալը, ո՛չ ներկան, հարցնելու չէ՛ թէ՝ քաղաքական, զինուորական ու դրամական երրեակ տեսակէտներով՝ լաւ հաշիւ մը եղա՞ծ էր անոր ձեռնարկուելէ առաջ, և մանաւանդ փնտռելու չէ՛ թէ այդքան մեծ ու պատասխանատու գործ մը, եթէ պիտի կատարուէր, պէտք չէ՞ր որ ազգին ուրիշ տարրերուն ալ համաձայնութեամբն ու գործակցութեամբը կատարուէր՝ որպէսզի թէ՛ բոլոր ուժերը միացած ըլլային և թէ՛ յառաջիկային, եթէ ձախողութիւն մը պատահէր, մէկը միւսին ըսելիք մը չունենար...։ Արդ, ձախողութիւնը—և ի՜նչ ձախողութիւն—պատահած է հիմա, այնքան մեծ որ՝ բան մը ըսելու ոչ սիրտ ունինք ոչ ժամանակ, և միայն կ'աշխատինք համատարած աղէտէն փրկել ինչ որ կարելի է։ Այս ըսել չէ, հարկաւ, թէ վաղը-միւս օր, տարիէ մը կամ տասը տարիէն, պիտի չճշդուին պատասխանատուութիւններն ու ազգին միացորդ մասը պիտի չգիտնայ թէ որո՞ւ և ի՜նչ բանի կը պարտի իր 1915ի աղէտը կորուստները. բայց, այսօրուան համար, կ'զգանք թէ կանխահաս և անօգուտ է ատիկա, ու ոչ միայն կ'աշխատինք զայն մոռնալու, այլ և ձեռք կ'երկարենք անո՛նց զոր՝ գոնէ երեւոյթներէն դատելով՝ մեր խըղճին մէջ յանցաւոր կը նկատենք այսօր, և ատիկա միայն անոր համար, ինչպէս ըսի, որ կարենանք բան մը աւելի փրկել սա՛ խոշոր նաւաբեկութենէն։ Ընդունեցէ՛ք, և ես կ'ուզէի աս միայն ըսել, որ վայրկեանը դէչ ընտրուած է իբրև պահանջատէր ներկայանալու և դիմացինին լռութենէն օգտուելով՝ ձայներնիդ բարձր հանելու համար անոր դէմ, երբ խօսելու իրաւունքը անո՛րն է աւելի...։

Հա՞րկ է որ աւելցնեմ թէ բոլոր այս խորհրդածութիւնները, այս կասկածանքներն ու մեղադրանքները պատճառ մը չեն որ «Հայկական Ռազմաճակատ»էն վրայ չմտածենք ու չօգնենք անոր։ Թէ՛րեւս, ազգին ամենէն ձեռնհաս մարդիկն ու բոլոր մարմիններն ալ միասին, արդէն նոյն որոշումը տուած պիտի ըլլային, և այդ պարագային՝ միջոցներուն վրայ յաւելումը միայն եղած պիտի ըլլար, ինչ որ միշտ բաւական չէ արդիւնքը փոխելու համար։ Բայց առանց այդ «թերև՛ս»ին ալ, ռազմաճակատի մը գոյութիւնը այնպիսի գործ մըն է — մանաւանդ ա՛յնպիսի թշնամիի մը դէմ որ իբրև պատանդ իր ձեռքին տակ ունեցած անմեղներու գլխուն արդէն իջեցուցած է հնաւոր մեծագոյն հարուածը — որ անոր նախապէս համամիտ եղած ըլլանք թէ ոչ, անոր մասին առաջուց մեր կամքը հարցուած ըլլայ թէ ոչ, եթէ քիչ-շատ մտածող և հոգի ու սիրտ ունեցող մարդիկ ենք՝ ուրիշ բան չենք կրնար ընել այսօր, բայց միայն կախուիլ չարունակութիւնն ուզել...։ Այս է պատճառը՝ որ «Հայկական Ռազմաճակատի եղբայրներուն մինչեւ ցարդ մեր տուրքը զլացած» չըլլալէ զատ, աշխատեր ենք՝ որ այդ տուրքը ուրիշներն ալ վճարեն, ջանացեր ենք առանձինն. ու հիմա ալ նորէն կը փորձենք կոր Ձեզի հետ միասին՝ որպէսզի շատ աւելի առատ ըլլայ այդ տուրքը. — ասոր պզտիկ ապացոյց մը, ուղղակի մեր մասին խօսելով, Ա.Րեւի բացած հանգանակութիւնն է «Հայկական Գոյութեան Կառուին համար», որուն արդիւնքը, ինչպէս գիտէք, կը դրուի Կաթողիկոսին տրամադրութեան տակ, «որպէսզի անխտիր յառաջացնէ աղէտեալները ապրեցնելու կամ կռուողները զօրացնելու գործին՝ ինչպէս որ պէտքը կը պահանջէ»։ Իսկ մենէ դուրս, այն գործը որուն մօտ ենք սրտով և որուն մինչեւ հիմա ուժ տուինք մեր կըրցած բոլոր միջոցներովը, ըսել կ'ուզենք «Ազգ. Շահերու Պաշտպանութեան Հիմնադրամ»ի գործը, մի՛թէ նոյնպէս քանիցս չյայտնե՞ց իր դրական համակրութիւնը «Հայկական Ռազմաճակատ»ի եղբայրներուն, հակառակ որ անոր նախագահէն ալ — գուցէ ո՛չ շատ արհամարհուելիք միտք մը և ուժ մը այս ազգին մէջ — մարդ խորհուրդ հարցուցած չէր կանխաւ Ռազմաճակատին բացմանը մասին՝ զոր թուի թէ Հայ անպատասխանատու Դաշինք մըն էր որոշած անդին...։ Խնդիրը, հետեւաբար, «զլանալ»ուն մէջ չէ, այլ չզլանալով հանդերձ՝ քիչ տալուն, կրցածէն շատ պակաս տալուն մէջն է, և այսպէս ընողները ոչ թէ «մերինները» են միայն, այլ դրեթէ «ամենքը»՝ որուն մէջ «ձերինները» ալ կան հարկաւ։

Ուշե՞ք տեսնէր որ միայն «Հայկական Ռազմաճակատի եղբայրներուն» չէ որ քիչ կուտան, այլ «Հայկան Մահաճակատի եղբայրներուն» ալ, որոնց մասին դանէ՝ կարծիքի տարբերութիւններ գոյութիւն պիտի չունենային և չունին հարկաւ։ Ինչո՞ւ սակայն խօսքը չէք ըներ անոնց։ Արդեօք անո՞ր համար՝ որ լայնօրէն կը հոգացուին կոր անոնք, թէ ո՛չ որովհետեւ ասոնց գործին մէջ մաս չունիք և ատկէ ո և է փառք չէք կրնար սպասել առանձինն կուսակցական տեսակէտով...։

Թէպէտ չհասկցայ թէ իմ «Դաշնակցական» թղթակիցս ինչո՞ւ միութեան «անտեղիտալի պէտքին և կարելիութեան համոզուեր է Սուէտիոյ գաղթականներուն եղերական վիճակը մօտէն տեսնելէ ու այնտեղ թագչուած տրամին չուրջ մղուած ու դարձուած դժոխային էնթրիկներուն գիտակցելէ ու անձամբ կրելէ վերջ», բայց կը գուշակեմ թէ զինք այսպիսի համոզումի մը բերելու համար արդարեւ չափազանց «դժոխային» եղած են այդ էնթրիկները...։ «Մեր չունեցած ճաշակները մոլութիւն կ'անուանենք» ըսած է մէկը. այնպէս ալ՝ կարծեմ թէ մեր մէջ էնթրիկ կ'անուանենք այն միջոցները զոր մենք չենք կրցած գործածել...։ Եթէ այս եղած չըլլար, իմ համոզումովս, «էնթրիկ»ին հայերէն բացատրութիւնը, պիտի սարսափէի սա՛ «դժոխային» բառէն՝ զոր ինչ ալ ըլլայ, պէտք չէր այդքան աժան գործածէինք այս պահուս՝ երբ բառերը յաճախ կը պակսին կոր անդի՛ն՝ Հայաստանի վիճակը պատկերացնել ուզած ատեննիս...։

Կ'անդրադառնամ, վերջացուցած պահուս, թէ ինծի հաճելի թուած նամակի մը իբրեւ պատասխան՝ այս տողերը պէտք եղածէն աւելի խիստ եղան։ Ի՞նչ պիտի ըլլար՝ եթէ հաճելի գտած չըլլայի զայն։ Կ'ապահովցնեմ, սակայն, թէ կուսակցական ու ազգային միութեան միեւնո՛յն փափաքովն է որ մղուեցայ այսպէս խօսելու, որովհետեւ նախ՝ սխալ հասկացողութիւններու վրայ չի կրնար երբեք հիմնուիլ միութիւնը, և երկրորդ՝ որովհետեւ Դաշնակցականի մը բան մը հասկցընելու, նոյն իսկ հետը բարեկամանալու համար՝ քիչ մը պօռալու է(*)...։

ՎԱՀԱՆ ԹԷՔԷԵԱՆ

(*) Մինչեւ չունիմ՝ որպէսզի խոստումիս համաձայն՝ Ռամկավարին նամակն ալ վերլուծեմ հոս։ Գիտնալը ըսելիքս սա՛ էր՝ թէ ես ալ չեմ փափաքիր կուսակցութեանց պարզ լուծումը (արդէն չէ՞ որ միութիւն կը քարոզեմ) այլ կը փափաքիմ անոնց լուծումը՝ իր բաժնին պէս «ազգ. պաշտպանութեան հզօր և անաւոր քոմիթէ»ի մը մէջ։ Իսկ նմանութեան եզրը այս և Դաշնակցականին նամակին միջեւ սա՛ է, ըստ իս, որ երկուքն ալ կ'զգուշացնեն միութիւնը «քնածութեան թոյն մը» ըսելէ, և մին «Հայկ. Ռազմաճակատ տուրք»ի, միւսը «հզօր ու անաւոր քոմիթէի մը» պահանջմամբ՝ աւելի ներուժ և աւելի ընդարձակ գործունէութեան մը համար միեւնո՛յն ազգային մտահոգութիւնը կը յայտնեն զոր պիտի չըլլէր գուցէ չէզոք մը...։ Եւ ասիկա հիմ մըն է որուն վրայ կրնայ միութեան շէնքը կառուցուիլ։ Վ. Թ.

ԹՈՂԷՔ ՓԱԽՉԻՄ

Փախստական Հայ Մօր

Ես աշնան պէս եմ:

Իմ զարդերս ինծմէ կողոպտուած են ու հանդերձներս գունաթափ են ու պատառոտուն։

Կ'ուզեմ փախչիլ, զի յոյսերս վիրաւորուած են։

Բայց հայրենի արեւը ոսկեղէն խոստումներով կը ջանայ զիս կեցնել, ու աստղերը կը ճչին արծաթեայ թելերով սեւաղիչեր երկրին կաշկանդել քայլերս։

Ո՛վ լուսին, քու սիրոյդ պաղատանքները կը փշրեցնեն զիս։

Ձմեռը մահուան երգերով կը վազէ ետեւէս։

Կ'ուզեմ փախչիլ, բայց համբաններու արիւնոտ բազուկները կը բռնեն զիս։

Ու կը տժգունի՛մ աշնան նման, և կը դողա՛մ ես։

Թողէ՛ք, հայրենի հորիզոններ. արտասուագին կ'աղաչեմ ձեզ, թողէ՛ք որ փախչիմ, իմ գիւղիս լացո՛ղ աղբիւրները։

Սրտիս վերջին հատորը մահացու վէրքով մը վիրաւորուած է։ Թողէ՛ք որ ղանի թեւերուս մէջ առած թաքչի՛մ այս չար աշխարհէս։

Թողէ՛ք, թողէ՛ք...

Զի իմ հոգիս հանդերձներուս նման պատառոտուն է, տեսէ՛ք, ու ես աշնան նման կողոպտուած եմ յոյսերէս...։

ՄԻՀՐԱՆ Ց. ԱԺՏԷՐԵԱՆ

ՀԱՑՈՒԹԵԱՆ

ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

Աղեքսանդրիոյ Հայ Կարմիր-Խաչին տուած կրկին այցելութիւններս յիշեցուցին ինծ Յիսուսը Գողգոթայի Խաչին վրայ և այն «կանայք բազումք՝ որք կային ի հեռաստանէ և հայէին»։

Տասնըինն դար առաջ Սեմական ցեղի մը մոլեռանդութիւնը՝ յանձին Պիղատոսի մարմարացած յունական փիլիսոփայութեան և տխեղծ կայսերական վարչութեան բարեհաճ հաւանութեամբ՝ խաչին վրայ կը զամէր անմեղ մարդ մը, որուն միակ յանցանքն էր եղած բարեգործութիւն սփռել իր քայլերուն վրայ, քարոզելով միանգամայն ճշմարտութիւն, եղբայրութիւն և արդարութիւն: Արեւական ցեղ մը՝ ընդունակ այդ վսեմ գաղափարները իւրացնելու, Արարատէն սլացաւ դէպի Գողգոթա և անձնազոհ հաւատքով մը այն խաչը իր կռնակն առաւ և սիրով կրեց զայն՝ լոյս հաւատքի և ազատութեան թշնամի բոլոր խաւարի զօրութիւններուն դիմացը։ Եւ իբրեւ ճըշմարտութեան դրօշակիր՝ այդ խաչը մերթ ուսերուն, մերթ բազուկներուն վրայ յաղթանակաւ պտտցուց ընդ հուր և ընդ ջուր, մինչեւ աշխարհի չորս ծագերը։ Եւ Շաւարշանայ երկնագեղ Շուշանայ՝ արքայադստեր Սանդխտոյ նահատակութենէն մինչեւ այսօրուայ բազմահազար Շաքէները՝ խաչակրութիւն մը, ո՛չ, ճըշմարիտ խաչելութիւն մ'եղաւ կեանքը Հայուն՝ որ ասիական բարբարոսութեան խաւարակուռ անապատին մէջ քրիստոնէութեան և արեւմտեան քաղաքակրթութեան անմեռ ջահակիրը կը հանդիսանայ։

Հայը, ուրեմն, ամենէ առաջ ըմբռնեց Գողգոթայի այն Մեծ Զոհին քարոզած ճշմարտութիւնը և այնուհետեւ իբր 2000 տարի՝ ո՛չ Պարսկական հուրն ու սուրը, ո՛չ Արաբական մեթոտիկ հալածանքները և ո՛չ Մոնկոլական անլուր խժդժութիւնները չկարողացան տապալել Հայութեան հսկայ և հաստարմատ կաղնին՝ որ յաւիտենական Մասիսի նման անսասան կը դիմադրաւէր ամէն հարուածի և ցնցումի։ Այո՛, անսասա՛ն կը մնար այդ կաղնին և կը պատրաստուէր ներկայ 1915ին ազատութեան գեղեցիկ գարունը ողջունելու, երբ Մոնկոլականութիւնը՝ Քայզէրի դեր-գլխային վանտալականութեան հետ դաշնակցելով՝ զայն արմատէն տապալելու մօտ դիւային ծրագիր մը յղացաւ և գործադրեց։ Եւրոպիոյ մէջ միլիոնաւոր ծաղիկ երիտասարդներու դիակներուն վրայէն այս ու այն կողմ սլացող Քայզէրը՝ իր բարեկամութեան մէջ պինդ բռնելու համար Թուրքերը՝ թոյլ տուաւ անոնց—ըսե՞նք նաեւ խորհուրդ տուաւ— տարինե՛րէ ի վեր զիրենք տագնապեցնող Հայկ. Խընդիրը կամաչ սեղաններու վրայէն միանգամ ընդ միշտ սրբելու կարծեաւ։ Եւ չգտնուեցաւ մէկը՝ որ նահատակուող ամբողջ ժողովրդի մը ի պաշտպանութիւն՝ բողոքոյ ձայն մը բարձրացնէր։ Պանթրազմիկ կամ չէզոք հզօրները՝ պըղատոնական սառնասրտութեամբ հանդիսատես կը լինեին կատարուող անլուր ողբերգութեան, և չպատահեցաւ Սիմէօն Կիւրենացի մը՝ որ օգնութեան փութար քրիստոնէութեան և քաղաքակրթութեան դատին համար մարտիրոսացող ժողովրդի մը խաչը գոնէ թեթեւցնելու...։

Եւ երբ կը բաղդատեմ Հայուն խաչելութիւնը Քու խաչելութեան հետ, ո՛վ Յիսուս, նե՛րէ ինծ ըսել որ՝ Քոյդ տեւեց քանի մը ժամ միայն, իսկ Հայունը՝ ամբողջ տասնեւինն դար։ Երբ «Հոգիս յօժար է՝ այլ մարմինս տկար» կը մրմնջէիր, հրեշտակ մը կը փութար զՔեզ զօրացընելու, իսկ Հայութեան անհուն ողջակէզին ոչ ոք կը նայի գթով։ Դուն, խաչին վրայ, «Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, ընդէ՞ր թողեր զիս» աղաղակեցիր. իսկ Հայը տասնեւինն դար ամբողջ Քո խաչիդ փաթթուած՝ անըմբռնելի հաւատքով մը կ'ողջակիզուի։ Դուն տեսնելով մայրդ ու Քու սիրեցեալ աշակերտդ խաչին տակը՝ զանոնք իրարմով մխիթարեցիր. հապա Միջագետքի անապատները քըշուած կամ ընտանիքներու ծոցէն խըլուած տարաբաղդ հայուհիներ և մանուկներ ինչո՞վ և ո՞րմով մխիթարուին։ Յովսէփ մը Քու մարմինդ խաչէն վար առաւ վիմափոր կոյս գերեզմանի մը մէջ ամփոփելու, և Նիկոդիմոս մը՝ խունկ ու հալուէ բերաւ Քու մարմինը օծելու. հապա Քու անուան համար նահատակուող հարիւր հազարաւոր Հայ հայրերու և մուսինններու անթաղ դիակները ո՞վ և ո՞ւր պիտի ամփոփէ։ Քեզ համար կուլալոյն «Դստերք Երուսաղէմի» և կանայք իւղ ու խունկ կը պատրաստէին՝ յետ միաշաբաթու Քո Գերեզմանը օծելու. հապա Եփրատի, Տիգրիսի, Ճորոխի, Արաքսի և Վանայ Պէնտիմահունի ալիքներուն մէջ իրենց սրբութեան և կուսութեան ապաստանը փնտռող բիւրաւոր հայ հարսներու և կոյսերու սրբազան մարմիննե՛րը ո՞վ պիտի թաղէ։ Քո տաճարները, ո՛վ Տէր, պղծեցին և քանդեցին, խաչդ անարգեցին և հայհոյեցին և Քու անունդ ծաղր ու ծանակ ըրին և դիւային ժպիտով մը կ'ըսեն այսօր անպատկառ. «Տեսնենք թէ իրենց պաշտած Քրիստոսը պիտի գա՞յ զիրենք փրկելու...»։ Եւ Հայը կը մարտիրոսանայ տակաւին Քո խաչին փաթթուած և Քո տաճարներուն սեմոց փարած։ Լռեցի՛ն Սաղմոսք և ալելուք Քո տաճարներուն, և Արեւելքի մէջ Քրիստոնէութեան օրրանը՝ աստուածատունկ դրախտ, Հայաստա-

տանը՝ համատարած աւերակոյտ մը դարձաւ, ուր բուեր կը վայեն, ուր մարդակերպ դաղանաց վոհմակներ կը վխտան և ուր սեւակտուց ագռաւներ ամէն օր թարմ թարմ դիակներ կը դիշատեն։ Եւ Դո՛ւ, Տէ՛ր, տեսա՛ր այս ամէնը՝ և թողի՛ր որ դրախտ մը սպանդանո՛ց դառնայ։ Բայց, աղէ՛, «Հայ քրիստոնեայն» դեռ չգիտեր վհատիլ և իր աչքը դէպ երկինք բարձրացուցած՝ լիահաւատ կը գոչէ. «Ի քեզ, Տէ՛ր, յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան. արդարութեամբդ Քով փրկեա և ապրեցո՛ զիս»։ Այո՛, ո՛վ Յիսուս, երբ Դու խաչիդ վրայ հոգիդ փչեցիր, ամենքը կարծեցին թէ մեռար, բայց Դու յարութիւն առիր և յաղթահարելով ցրուեցիր թշնամիներդ։ Փութա՛ ուրեմն, յարո՛ և զմեզ հզօր զօրութեամբդ Քով և փառաւորեա՛ զանուն Քո ի մէջ անհաւատից և անսիրտ քրիստոնէից։

Օ՜հ, այս ամէն խորհրդածութիւնները անցա՛ն մտքէս այն թանկագին ժամուն, երբ կը լսէի պատկառելի տիկնոջ մը նախագահութեամբ գումարուած Կարմիր-Խաչի անդամուհեաց գոհունակ վըլվըլուկները իրենց սուրբ գործին շուրջ և մի քանի պարոններու հետ հաւոյթի տարբեր ծրագիրներ մշակելու խնդրով անձանձրոյթ փոխանակուած կարծիքները իրենց սենեկին մէջ՝ որ այդ պահուն քրիստոնէական սիրոյ և եղբայրութեան տաճար մը կը թուէր ինծի։ Սուէտիոյ հերոսները, Կովկասու կամաւորները, Հայաստանի մարտիրոսները, Միջագետքի անարիւն զոհերը ևն., սինէմայի արագութեամբ կուգային կ'անցնէին անոնց աչքին առջեւէն, և սակայն այդ գեղեցիկ և նուիրական խանդավառութեան մէջտեղ բան մը կը պակսէր որ կը շուարեցնէր զիրենք ծովածաւալ կարիքին ահագնութեան հանդէպ։ Ո՜հ, այդ՝ անիրաւ մամոնային էր, որ իրեն հետ շատ մը սըրտեր բանտարկած կը պահէ երկաթէ սընտուկներու մէջ։ Եւ արդարև կարիքն է ահագին, իսկ մատուցուած դարմանը՝ խոստովանեցէ՛ք, բարեկամնե՛ր, դեռ յո՛յժ անբաւարար։ Եթէ երբեք Երիքովէ Երուսաղէմ ճանապարհին վրայ աւազակներէ կողոպտուած և վիրաւորուած Իսրայէլացիի մը նման վիրաւոր ինկած Հայը՝ օտար Սամարացիէ մը բնաւ օգնութիւն չի գտներ, ո՞ւր են գէթ արտասահմանեան հայ կրեսոսները։ Եթէ Աստուծոյ կը հաւատան այդ մարդիկ, ե՞րբ պիտի երեւցնեն իրենց մէջէն մեծատուն Յովսէփ մը և Նիկոդիմոս մը՝ որոնք մահամերձ ազգին յարութեան յուսով և արքայութեան ակնկալութեամբ բանան իրենց սրտին և քսակներուն փականքները… Քու ձգձգումներովդ մինչ այլուր ամէն օր քու համբերիններէն հազարաւորներ կը մեռնին, և քու ձեռքի կըծկումներովդ մինչ բիւրաւորներ անպատսպար և անսուաղ կը տուայտին, դո՛ւ, ո՛վ հայ մեծատուն, խորհիլ կուտաս թէ քո սիրտը նուազ կը բաբախէ ազգին համար, կամ ազգին փրկութեան հաւատքին փոխարէն թերահաւատութիւն, չըսեմ յուսահատութիւն տիրած է քո հոգիին. բայց գիտցէ՛ք որ քրիստոնէութիւնը ոճիր կը համարի յուսահատութիւնը և թերահաւատներու առջեւ իր դուները կը փակէ Հայ Եկեղեցին։ Եթէ կը ճանչնաք Քրիստոսը, յիշեցէ՛ք ուրեմն Անոր այս խօսքը. «Եթէ հաւատաս տեսցես զփառս Աստուծոյ»։ և որպէսզի ձեր հաւատքը ըլլայ կենդանի՝ յիշեցէ՛ք անոր սա պատուէրն ալ. «Գանձեցէ՛ք ձեզ գանձս յերկինս, ուր ոչ ցեց կայ և ոչ գող»։ Հա՞րկ կայ ձեզ յիշեցնելու նաև «իմաստնոյն անիրաւութեան» իրեն բարեկամներ նախապատրաստող իմաստուն տնտեսը։

Բայց դուք կը զիջանի՞ք? կամ ժամանակ ունի՞ք?? Քրիստոսի Աւետարանը կարդալու… Սակայն ես կը չողբ՛մ արդեօք նըէթէս՝ վայրկեան մը կրօնական քարոզչի դերին մէջ մտնելով։ Զմայլանքով կ'անդրադառնամ ես դարձեալ Կարմիր-Խաչի կանանց գործունէութեան սկսեալ Աղեքսանդրիայէ, Գահիրէէ մինչեւ Զակազիկ, Սուտան, Թանթա, Քաֆրէլ-Շէյխ-Շարգիէ և Բոր-Սայիտ, և իմ այս դառն խորհրդածութիւններս սփոփանքի կը փոխուին, երբ կը տեսնեմ որ Հայութիւնը Գողգոթայի վրայ անօգնական լքուած չէ և այսօր ալ կան կանայք՝ որք հեռուն կեցած կը նային դէպի Հայ քրիստոնէութեան զոհերը՝ ազու և արտասուալից աչքերով, դթով և գութով, և որոնք Պօղոսի չափ իրաւունք ունին ըսելու. «Զչարչարանս Քրիստոսի (Հայութեան), ի մարմնի մերում կրեմք»։ Այո՛, Եգիպտահայ կինը՝ սկսեալ Տիկ. Մաթոսեաններէ՝ կ'զգայ այսօր Հայութեան անհուն տառապանքը և կը գործէ։ Մինչ աշակերտները խոյս կուտային և նոյն իսկ կ'ուրանային զՅիսուս, կիներն էին որ կը հետեւէին անոր մինչեւ Գողգոթա և անոնք էին որ ի վարձ իրենց հաւատոց, առաջին անգամ տեսան «զյարուցեալն Քրիստոս» և անոր յարութեան աւետիքը բերին թերահաւատ աշակերտներուն։

Հայ կինը չա՛տ անգամ դիւցազնացած է իր հաւատքովը: Ո՞վ չգիտեր Փառանձեմ դիւցազնուհին, որ ընդհանուր յուսահատութեան մէջ Հայաստանի գոյութիւնը կը պաշտպանէր։ Հինգերորդ դարու «փափկասուն տիկնայք» չէի՞ն որ Հայ քրիստոնէութեան ջահը վառ պահեցին՝ դարմանելով տառապեալները և Նուարսակի փառաւոր դաշինքը Պարսից պարտադրող Վահանը և անոր կորիւն ընկերները դաստիարակելով. յիշէ՞ք նաև Խոսրովանոյշը՝ որ կը հիմնէր Հաղբատու և Սանահնի դպրեվանքերը և Բագրատունի Աշոտի անուան շուրջը կը բոլորէր Ողորմածի անմահ փառապսակը։ Այո՛, կնոջական ձեռքը երբ բարեգործութեան նպատակաւ կը շարժի, մոգական գաւազանի հրաշքներ կը գործէ։

Մե՛ծ է ուրեմն ձեր դերը և կոչումը, ո՛վ դուք յանուն Կարմիր-Խաչի զինուորեալ տիկիննե՛ր և օրիո՛րդներ։ Ձեր օրինակը հմայէ պիտի և ելեքտրականացնէ նաև այրերը, և աւելի պիտի արիացնէ զանոնք գործելու և զոհաբերելու։ Էջմիածնի և Սսոյ Կաթողիկոսները, Պոլսոյ Պատրիարքը, Թիֆլիսի Կեդր. Բիւրօն և կամաւորները, Պատուիրակութեան Նախագահ փաշան և ձեր Սրբազան Առաջնորդը իրենց հոգեյոյզ կոչերովը ա՛յս կ'սպասեն Եգիպտոսէն և արտասահմանէն։ Վերջապէս սրտակեղեք հեծեծանքներով ձեր օգնութիւնը կը պաղատին վիրաւոր Մայր Հայաստանի հարիւր-հազարաւոր թշուառ զաւակները, որք գազաններու ժանիքներէն հազիւ պրծած՝ սովի ու համաճարակ հիւանդութեանց կը մատնուին այսօր Միջագետքի անապատներու և նոյն իսկ Կովկասու մէջ, ուր միայն Էջմիածնի 32,000 ապաստանեալներէն՝ Յուլիս 28էն մինչ Սեպտ. 5 եօթ հազար հոգի կը մեռնին և ձեր հէք քոյրերը իրենց սիրելիներու պատանքները կարելու համար, ի չգոյէ դերձանի իրենց գլխի վարսերը կը գործածեն։ (Տե՛ս «Մշակ»ի Թ. 202ի մէջ Բ. Իշխանեանի գրութիւնը։

Աղեքսանդրիա, 20 Հոկտ. 915

Հ. ԵՐԱՄԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ(*)

ԼՈՐՏԵՐՈՒ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ

(Քաղուած «Թայմզ»էն)

ԼՈՐՏ ՔՐՈՒԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Լորտ Քրու (Առս. Գործոց դեր-Նախարար).— Ազնուական կոմսին հետ կատարելապէս համաձայն եմ թէ պաշտօնապէս հաստատուած եղելութիւնները՝ որոնց մասին տեղեկութիւններ ունինք՝ պէտք է ի լուր աշխարհի հրատարակուին։

Տեղեկութիւններ հրատարակուած են լրագրի մը մէջ ի Տփղիս՝ ուր բնականաբար ամէն պատեհութիւններ կան ստուգելու պատահած եղելութիւններուն ճշգրտութիւնը։ Ասոնք ամենացաւալի բընոյթ ունին։ Պաթումի բրիտանական հիւպատոսը, Տփղիսի մամուլէն մէջբերումներ ընելով, կը նկարագրէ այն ահռելի սարսափները որ տեղի ունեցած են Սասունի մէջ՝ ուր բնակչութիւնը բացարձակապէս բնաջինջ եղած է, բաց ի քիչուոր փախստականներէն։ Ամբողջ երկիրը հիմնայատակ աւերուած է։ Բազմաթիւ Հայեր, Գաղզէացիք և ուրիշ փախստականներ ապաստանած են Ուրմիա և Կովկասեան նահանգները։ Փախստականներու ցրուար թիւ մը հասած է Էջմիածին և Երեւանի գաւառին մէջ կէտերը։ Ասոնք մեծ մասամբ եկած են Մանազկերտի լեռնային շրջաններէն և Վանէն։ Հիւպատոսը կը յայտնէ թէ այս փախստականներէն մօտ 160,000 անցած են Իգդիրէն և Էջմիածինէն։ Կը նկարագրէ անոնց ահռելի վիճակը. անոնք մեծ մասամբ հիւանդութենէ և սովէ կը տանջուին։ Անոնց մէջէն օրական առնուազն 100 մարդ կը մեռնի։ Իրաց այս քստմնելի կացութեան դարման տանելու համար տեղւոյն վրայ գործ դրուած ջանքերը ամէն գնահատումէ վեր են, բայց շատ աւելի լայն չափով առողջապահական պէտքեր և ուտեստներ հասցնելու պէտք կայ, գաղթականներուն կացութիւնը նիւթապէս բարւոքելու համար։ Իլէնօվքայի և Անթիի մէջ ալ մօտ 9000 ապաստանեալներ կան որոնց վիճակը միւսներէն լաւագոյն չէ։ Տեղեկագիր մը կը յայտնէ թէ՝ եթէ նպաստներ չի հասնին շուտով՝ կը վախցուի որ անոնց կէսը պիտի մեռնի: Ուրմիայի փախստականներուն վիճակն ալ ողբալի կը նկարագրուի. ասոնց ճիշդ թիւը չունիմ, բայց խիստ բազմաթիւ են։ Այնտեղի ռուս հիւպատոսը ձեռքէն եկածը կ'ընէ անոնց վիճակը ամոքելու համար։

Ասոնք են ահռելի իրողութիւնները, և սրտագին համաձայն եմ ազնուական կոմսին յայտնած այն կարծիքին թէ՝ այսպիսի սարսափելի խժդժութիւններ նուազ ընդվզեցուցիչ չեն Հնդկաստանի մեր իսլամ հպատակներուն և ամէն տեղի լուսաւորեալ իսլամական հասարակաց կարծիքին համար՝ քան մեզի համար։ (Հաւանութեան նշաններ)։ Այսպիսի արարքներ, ի հարկէ, բնաւ երբեք արտօնուած չեն իսլամութեան օրէնքներով ու չեն կրնար ներուիլ իսլամական դատաստանով, Նոյնպէս համաձայն եմ որ այս պատմութիւնները պէտք է ի նկատի ունենայ ո՛ և է եւրոպական ժողովուրդ կամ ժողովուրդի հատուած մը որ տրամադիր է իր բաղդը կապելու Թուրքիոյ հետ։ Կառավարութիւնը պաշտօնական հաստատութիւնը չունի այն լուրերուն որոնց համաձայն Ասիոյ մէջ գերման հիւպատոսական ներկայացուցիչներ ոչ միայն լուռ հանդիսատես եղած, այլ դրականապէս քաջալերող իսկ հանդիսացած են այս սարսափներուն, բայց այս հաւաստումը բացէ ի բաց կ'ընեն ամերիկացի դիտողներ որոնք ի վիճակի են եղելութեանց վրայ գաղափար մը կազմելու, և մենք՝ միայն ուրիշ տեղերու մեզի ծանօթ նախընթացներէն դատելով՝ կը պարտաւորուինք ըսել թէ կարելի չէ անհաւանական նկատել այդ հաւաստումները։ Մեր այն յայտարարութիւնը թէ երբ հաշուեյարդարութեան օրը հասնի՝ խժդժութիւնները գործադրող կամ անոնց մասնակցող անհատները պիտի չմոռցըւին, կը պահէ տակաւին իր զօրութիւնը։ Կառավարութիւնը անօգուտ նկատեց այդ միջոցով ուղղակի կամ անուղղակի նոր հաղորդակցութիւն մը փորձել Թուրքիոյ հետ։ Անիկա իր ձեռքն ունի մեր հայեացքները, ու զանոնք անգամ մ'ալ կրկնելը, մեր կարծիքով, ո՛ և է օգտակար արդիւնքի չպիտի ծառայէր։

ԼՈՐՏ ՃԷՅՄՍ ՊՐԱՅՍԻ ՃԱՌԸ

Դեր-Կոմս Պրայս. — Զանազան աղբիւրներէ իմ առած տեղեկութիւններս ցոյց կուտան՝ թէ այն թիւը զոր ազնըւական լորտը անհաւատալի կը կարծէր —թէ 800,000 մարդ ոչնչացուած ըլլայ անցեալ մայիսէն ի վեր—, դժբախտաբար շատ հաւանական թիւ մըն է։ Կոտորածները արդիւնքն են քաղաքականութեան մը, որ որչափ կարելի է գուշել, բաւական ժամանակ առաջ բացարձակապէս կանխամտածուած է այն խմբակէն որ այսօր Թուրք կայսրութեան կառավարութիւնը իր ձեռքին մէջ ունի։ Անոնք այս ծրագիրը գործադրելու վարանեցան մինչեւ որ առիթը ներկայանար և յարմար առիթը եկած համարեցին մայիս ամսուան մէջ։ Այն ատենն էր որ հրամանները արձակուեցան և այս հրամանները ամէն տեղի համար Կ. Պոլսէն եկան։ Մէկ քանի տեղեր, կառավարիչները գթասիրտ և մարդասէր մարդիկ ըլլալով մերժեցին հրամանները գործադրել և ջանացին իրենց ձեռքէն եկած պաշտպանութիւնը ընել տարաբաղդ Հայերուն։ Կը լսեմ թէ երկու տեղ կառավարիչները պաշտօնանկ եղած են՝ եկած հրամանները գործադրել չուզելնուն պատճառաւ, ու այս կերպով դարձեալ կոտորածները գործադրուած են։

Գործելու եղանակը վերջին աստիճան սիստեմաթիկ եղած է։ Քաղաքի մը ամբողջ բնակչութիւնը կ'աւլուէր կը սրբուէր։ Այրերը կը բանտարկուէին, մընացած այր մարդիկը և կիներն ու տղաքները քաղաքէն դուրս կը հանուէին։ Բաւական հեռաւորութիւն մը երթալնէն վերջ, զանոնք իրարմէ կը զատէին ու այրերը կը տանէին առանձին տեղ մը, ուր զինուորները զանոնք գնդակահար կամ սուինահար կ'սպաննէին։ Իսկ կիները, տղաքները և ծերունիները ամենէն ստոր զինուորներու հսկողութեան տակ կը ղրկուէին իրենց հեռաւոր աքսորավայրը՝ որ երբեմն վատառողջ գաւառ մըն էր, բայց աւելի յաճախ՝ Հալէպի արեւելակողմը Եփրատի ուղղութեամբ տարածուող ընդարձակ շրջանը։ Ասոնք օրերով կը քշուէին կը տարուէին զինուորներէն. շատեր ճամբուն վրայ ինկան և շատեր անօթութենէ մեռան։ Թուրք կառավարութեան կողմէ անոնց ո՛ և է պաշար չէր տրուէր ու անոնք իրենց բոլոր ունեցածէն կը կողոպտուէին ու շատ անգամ կիները կը մերկացնէին և այդ վիճակին մէջ կը քալեցնէին։ Շատ կիներ խենթեցան և իրենց զաւակները նետեցին, անկարող ըլլալով զանոնք աւելի հեռուն տանիլ։ Կարաւաններուն ճամբան նշանագրուած էր դիակներու շարքով մը և կը թուի թէ համեմատօրէն քիչերը հասան իրենց նպատակակէտին։

Տրապիզոնի կոտորածին մանրամասնութիւնները հաստատուած են վկայութեամբը իտալական հիւպատոսին, որ այդ ժամանակ հոն ներկայ էր։ Կ. Պոլսէն հրաման եկաւ Տրապիզոնի բոլոր Հայ քրիստոնեաները մահացնելու։ Մահմետականներէն շատեր ջանացին իրենց քրիստոնեայ դրացիները ազատել և անոնց ապաստան տուին իրենց տուներուն մէջ. բայց Թուրք իշխանութիւնները անողոք գտնուեցան։ Հնազանդելով իրենց ստացած հրամաններուն, փընտռեցին գտան քրիստոնեաները, զանոնք մէկտեղ հաւաքեցին ու քշկռտեցին դէպ ի ծով։ Բոլորը մէկէն դրուեցան առագաստանաւերու մէջ և մինչեւ որոշ հեռաւորութիւն մը տարուեցան Սեւ ծովուն բացերը, ու հոն ծովը թափուեցան և խեղդուեցան։ 8—10,000է բաղկացեալ ամբողջ հայ բնակչութիւնը այս կերպով բնաջնջուեցաւ մէկ բրիկուան մէջ։

Այս եղելութենէն վերջ ուրիշ ո և է պատմութիւն հաւատալի կը դառնայ, և կը ցաւիմ որ բոլոր պատմութիւնները նմանօրինակ սարսափելի տարրեր կը պարունակեն, երբեմն աւելի պատկացած ընդվզեցուցիչ տանջանքներու նկարագրութիւններով։ Գրեթէ ամբողջ ազգը աւլուեցաւ ու սրբուեցաւ, չեմ կարծեր թէ պատմութեան մէջ գտնուի պարագայ մը, յամենայն դէպս Լէնկթիմուրի օրէն ի վեր, յորում այսչափ քստմնելի և այսչափ ընդարձակ ծաւալով եղեռնագործութիւն մը յիշատակուած ըլլայ։

Կ'ուզեմ աւելցնել թէ, այն քիչը որ լսած եմ՝ կը հաստատէ ազնուական լորտին խօսքերը, երբ կ'ըսէր թէ չկայ ո և է պատճառ մը կարծելու թէ այս պարագային մէջ մահմեդական մոլեռանդութիւնը ո՛ և է դեր մը ունեցած ըլլայ: Որչափ որ կրցայ հասկնալ, այս եղելութիւնները իսլամներու կողմէ աւելի սարսափով դիտուեցան քան թէ համակրութեամբ. յամենայն դէպս, անոնք երբեք իրենց հաւանութիւնը ցոյց չտուին Թուրք կառավարութեան այս վարմունքին։ Կարեւորութենէ զուրկ չէ՛ յիշել, նկատի ունենալով այն չքմեղանքը զոր գերման կառավարութիւնը սկսած է արդէն առաջ բերել իր բարեկամներուն և Դաշնակիցներուն համար, թէ ո և է հիմ չունի այն վերագրումը թէ Հայերը ապստամբած էին։ Ո և է քաղաքական պատճառ մը չկայ որով կարելի ըլլար արդարացնել Թուրք կառավարութեան արարքը. ինչ որ պատահեցաւ, պարզապէս փորձ մըն էր իրագործելու այն նշանաբանը զոր Սուլթան Ապտիւլ-Համիտ ժամանակաւ բանաձեւեց. «Հայկական խնդիրը մէջտեղէն վերցնելու համար պէտք է Հայերը մէջտեղէն վերցընել», ու այս նշանաբանը շատ աւելի կատարեալ կերպով և շատ աւելի արիւնարբու ամբողջականութեամբ մը գործադրուեցաւ Թուրք կառավարութեան արդի գլուխներուն կողմէ՝ քան ինչ որ եղած էր երբեք Ապտիւլ-Համիտի ժամանակ։

Կարծեմ տակաւին կը գտնուին մէկ քանի տեղեր որ Հայերը լեռները քաշուած են ու կրցածնուն չափ ինքզինքնին կը պաշտպանեն։ 5000ի մօտ Հայեր ալ ֆրանսական յածանաւի մը կողմէ Եգիպտոս փոխադրուեցան։ Հետեւաբար, ամբողջ ցեղը տակաւին ջնջած չէ։ Վըստահ եմ թէ մեր ամենուս բաղձանքն է որ ամէն ջանք ի գործ դրուի օգնութիւն հասցնելու համար լեռները ապաստանած դժբախտներուն։ (Հաւանութեան նշաններ)։ Չկրցայ ո և է վաւերական տեղեկութիւն ստանալ գերման պաշտօնատարներու կատարած դերին մասին՝ Թուրքերուն արարքները թելադրելուն կամ քաջալերելուն մէջ. բայց կարծեմ կարելի է ըսել թէ՝ այս քրիստոնեայ ազգին մնացորդները փրկելու միակ հաւանականութիւնը կը մնայ արտայայտութեանը մէջ աշխարհի հասարակաց կարծիքին, մանաւանդ ա՛յն քրիստոնեայ ազգերուն՝ որոնց ձայնը հաւանօրէն կըրնայ ազդեցութիւն մ'ունենալ նոյն իսկ գերման կառավարութեան վրայ և զայն մղել առնելու քայլ մը որով կասեցուին կոտորածները, — ըսելու Թուրքերուն՝ որ շատ հեռուն գացած են և թէ կան վերջապէս բաներ զորոնք աշխարհի հանրային կարծիքը չկրնար թոյլատրել։ (Ծափահարութիւնք)։

Թայմզ, 7 Հոկտեմբեր — Թարգմ. Մ. Տ.

(*) Շար. նախորդ թիւէն եւ վերջ։

ԿԻԼԻԿԵՑԻՆԵՐԸ

ԲՈՐ-ՍԱՅԻՏԻ ՄԷՋ

(Սեփական թղթակցութիւն)

24 Հոկտ. կիրակի

Եպիսկոպոսական պատարագին առթիւ սովորական պզտիկ շոգեմակոյկին տեղ երկյարկ խոշոր մը, այսօր։ Թեռասը լեցուն է Բոր-Սաիտի եւրոպական գաղութին ծանօթ դէմքերովը՝ որոնց հետ են քսանէ աւելի Ֆրանս. նաւային պաշտօնատարներ, մասնաւորապէս Ֆրանս. երրորդ նաւաբաժնին դեր-հրամանատարը և … զրահաւորին հրամանատարը ու սպաները որոնք մեր կարիճներուն ազատման գործին համար առաջին անգամ Սուէտիա ցամաք ելլողներն եղան։ Ասոնցմէ զատ՝ յիշենք ներկաներուն մէջ Տիկ. Էլկուսը, Քանալի ընկ.եան տնօրէն Պ. Տիւմօնը իր տիկնոջ հետ, Մէսաժըրիի, Ֆրանս, Բօսֆէն, Քրէտի Լիօնէի և այլ կարեւոր հաստատութեանց տնօրէններն իրենց ընտանիքներով, և շատ ուրիշներ։

Եկեղեցի-վրանը, որուն առջև Սեպուան վարժարանի հազարէ աւելի աշակերտները ամֆիթէատրաձեւ շարուած կը կենան հիւրերուն շուրջ, կարեւոր փոփոխութիւններու ենթարկուած է այսօր. չորս սիւներ, ճարտարօրէն կանգնուած, բարձըր կը բռնեն զայն, ու պզտիկ մերկ խորանը ծաղիկներով ու քանի մը աշտանակներով զարդարուած է։ Ուրի՛շ ո՛չինչ. բայց հաւատքի լայն ու կենդանի շունչը որ կը բարձրանայ աւազին վրայ խռնուած գաղթականներու ծովածաւալ բազմութենէն՝ անոր հոգեպէս նայուածքը դէպ ի խորանն ու դէպ ի պատարագւոր, անոր հոգեմըմունջ աղօթքին ըղձուկն ու անոր արցունքն ալ որ յիշատակով ու յոյսով շաղուած կը հոսի շատերուն աչքէն, իր պարզութեանը մէջ այնքան փառայեղ և այնքան վսեմ կ'ընծայեն տաղաւարի տակ այս եպիսկոպոսական պատարագը՝ որքան եղած չէ Տաճարի պատարագ մը ո՛ և է Մայր-Եկեղեցիի մը հոյակապ գմբէթին տակ… Այս կ'ըլլայ ամենուն տպաւորութիւնը, մէջը ըլլալով նաև Եւրոպացի հիւրերն որոնք քանիցս կը յայտնեն իրենց յուզումն ու սքանչացումը։

Ետ պատարագին, Թափօրով եկեղեցիէն ճամբայ կ'ելլեն Սրբազանը, հիւրերն ու ժողովուրդը։ Թափօրին առջեւէն երկու հսկաներ կը կրեն կարմիր խաչանիշ ազատարար հսկայ դրօշը, որ ծածանեցեր էր Մուսա լերան վրայ և որ պահուեր էր այս նոյն հրամանատարէն և սպաներէն… Հիւանդանոցի շրջափակին դրան առջև կանգ կ'առնէ Թափօրն ու

Սրբազանը կը դառնայ կ'օրհնէ իրեն հետեւող բարձրաստիճան հիւրերն ու բոլոր ներկաները, և մաղթանքներ կ'ընէ Ֆրանսայի, Անգլիոյ ու Դաշնակիցներուն զէնուց յաջողութեանը համար։ Հոս հիւրերը հրաժեշտ կ'առնեն և կ'ուղղուին դէպ ի նաւամատոյցը։ Ճամբուն վրայ բարեւի կեցած են մեր քաջերը, ու մինչև որ հրամանատարն իր հետեւորդներովը շոգենաւ կը մտնէ՝ չեն դադրիր «Վիվ լա Ֆրանս, Վիվ լ'Անկլըթերա, Վիվ լէ զ'Ալլիէ» պոռալով ծափահարելէ, որոնց կը պատասխանէ հրամանատարը գլխարկ ի ձեռին՝ բարեւելով իր երկու կողմին վրայ շարուած կտրիճները։ Հրամանատարն իր առանձին շոգեմակոյկով և միւս հիւրերը զիրենք բերող նաւով՝ հազիւ թէ բաժնուած են նաւամատոյցէն, ահա այս անգամ ալ պզտիկներն են, մանչ և աղջիկ, որոնք դիրք բռնած ծովեզրին երկայնքը իրենց դպրոցներուն բակին մէջ, անընդհատ կը ծափահարեն։ Ցետոյ հայրենաշունչ երգ մըն է որ ծայր կուտայ հազարաւոր աշակերտներու բերնէն...։ Տեսարանը խորապէս կը յուզէ հրամանատարը՝ որ դիտմամբ դանդաղեցնել կուտայ իր շոգեմակոյկին գնացքը, աւելի երկար և աւելի մօտէն տեսնելու և բարեւելու համար տղաքը։ Շոգեմակոյկը հեռացած է արդէն, երբ մեր պզտիկները վերջին Վիվ լա Ֆրանս մըն ալ կը հասցնեն անոր...։

Քանալի ընկերութեան տնօրէնին կողմանէ մասնաւորապէս տրամադրուած շոգեմակոյկով մը՝ Սրբազանն ալ, Քաղաքական Ժողովի անդամներով (Պ. Պ. Լալաեանց, Քէչեան, Ղազարոսեան և Աղատեան) կը մեկնի Քէմբէն։ Հոս պէտք է շնորհակալութեամբ յիշել Պ. Տիւմցնի ամէն կերպով սիրայօժար մատուցած ծառայութիւնները Հայերուս։

— Հանդէսներու և ուրախութիւններու է՛ն առատ շաբաթը եղաւ այս։ Կը յուսանք որ, օդերը չցրտած, դեռ շատ ուրիշներ ալ պիտի գան։ Ու բոլոր այս շքեղ հանդէսներու նկարագրութիւնը ըրած ատեննիս՝ չպիտի մոռնանք ուրախութեամբ արձանագրելու որ այսօր, կիրակի, սկսաւ նաև թէյի բաշխումը։ Ասկից վերջ, ամէն օր կանոնաւորապէս, մեր գաղթականները առտուն 8ին և իրիկուան 5ին թէյ պիտի ունենան խըմելիք, ինչ որ կենսական կարեւորութիւն ունեցող խնդրի մը լուծումն է։ Ասկէ զատ՝ երկուշաբթի օրուընէ սկսեալ դպրոցի 1130 աշակերտներուն պիտի տրուի, դպրոցի աւարտման, մէկ մէկ պզտիկ ճերմակ հաց, որ Ամերիկեան Կարմիր Խաչի նուէրներու. շարքին առաջինն է։ Սոյն ընկերութիւնը որոշած է նաև կառուցանել 12 տաք բաղնիք, — ամէնահրաժեշտ պէտք մը —, ընդարձակել հիւանդանոցի շէնքը, ու վկայեալ բժիշկ-հիւանդապահուհի մը ղրկել մեզի։ Հազար շնորհակալութիւննե՛ր իրենց։

Կ'իմանանք որ Պ. Ճիլյէրճեան ալ խոստացած է 3 ոսկիի ամսավճար մը ընել, տկարակազմներու յատուկ նոր խոհանոցին ի նպաստ։ Այս խոհանոցը ամենակարեւոր դեր մը խաղալու կոչուած է, որով ամէն կերպով արժանի է բարեսիրտներու օժանդակութեան։

— Առաջնորդ Ս. ը, իր բոլոր պաշտ. հետեւորդներուն և ուխտաւորներու մէկ մասին հետ, կը մեկնի վաղը ցորեկի թռէնով դէպի Գահիրէ։

***

Բօր-Սաիտի Հայկական Բանակատեղիին մէջ կիրակի օր կատարուած եպիսկոպոսական պատարագի այս հանդէսին նկարագրութիւնը, բաց ի վերև հըրատարակուած թղթակցութենէն, ստացած ենք նաև Տ. Տ. Հրանտ Աղատեանէ և Գաբրիէլ Թէքէեանէ՝ որոնց կը փութանք մեր շնորհակալութիւնը յայտնել։ Այս առթիւ Տ. Աղատեան հետեւեալն ալ հրահանգած է մեզ.

«Հիմա, սիրելի՛ս, կարեւոր խնդիր մը կայ. պիտի խնդրեմ որ լրագրական աղմուկ մը հանէք որ 30 ոսկիի գումար մը գոյանայ և 2 հատ գուլպայի մեքենայ գնուելով աշխատցնելու սկըսուի։ Այսօր իմացանք թէ խոալ. բանակին նուէր տրուելու համար մօտաւորապէս 100,000ական բուրդ գուլպայի և բուրդ ձեռնոցի խնդրանք կայ՝ որոնք շատ շատ կընան հիւսուիլ մեր ճեմբին մէջ. այս կերպով թէ՛ գործ հայթայթած կ'ըլլանք գաղթականներուն և թէ՛ ծուլութեան անբարոյացուցիչ ախտէն զիրենք զերծ պահած կ'ըլլանք. իմ մտածած ձևս սա է. ես 2 ոսկի կը վճարեմ և այսօր իսկ կը յանձնեմ Առաջնորդ Ս. ին՝ որուն հետ սենեկակից եմ հոս դալէս ի վեր. կը յուսամ որ մինչև 10 ոսկիի հասցնեմ իմ բարեկամներուս շրջանակէն երկուքական ոսկի գանձելով. կը մնայ 20 ոսկի մը եւս, որով կարելի ըլլայ 2 մեքենայ գնել։ Գոնէ 10 հայ չպիտի գտնուի՞ն որ անմիջապէս երկուքական ոսկի ուղարկեն Առաջնորդ Ս. ին՝ գուլպայի մեքենաներու գնումին համար։ Այդ ընողները ազգային մեծ գոհունակութիւն մը պիտի զգան տեսնելով օրէ օր արհեստներու զարգացումը ճեմբին մէջ»։

Տ. Աղատեանի սոյն թելադրութիւնը կը յանձնենք մեր ընթերցողներուն ուշադրութեան։ Թէպէտև Առաջնորդարանի Պաշտ. Ցայտարարութեան համաձայն պաշտօնապէս չի մտնանչուիր ան, բայց Տ. Աղատեանի իբրև Գահիրէի Քաղ. Ժողովոյ անդամ ունեցած պաշտօնական հանգամանքն ու Բօր-Սաիտի մէջ Առաջնորդ Ս. ին հետ սենեկակից ըլլալը՝ բաւական երաշխաւորութիւններ են, ըստ մեզ, որպէսզի իր առաջարկը գոնէ կէս-պաշտօնական նկատուի և ըստ այնմ գոնէ այն գործնական ընդունելութիւնը որուն արժանի է։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

ՀԱՅՈՑ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

ՊՈՒԼԿԱՐԻԱ ԵՒ ՀԱՅԵՐԸ

«Թայմզ»ի Թղթակիցը Ուաշինկթընէն Հոկտ. 13 Թուականաւ հետեւեալը կը հեռագրէ իր Թերթին.

«Պոլսոյ Ամերիկեան դեսպանը, Պ. Մօրկընթաու, կը տեղեկագրէ թէ Պալքանեան կացութիւնը (Պուլկարիոյ միջամտութիւնը) յառաջ բերած է հայաջինջ քաղաքականութեան նոր պայթում մը։ Կոտորածները վերսկսած են։ Ամերիկեան կառավարութեան ճիգերը բոլորովին ձախողած են։ Ո՛և է կարեւորութիւն չէ տրուած իր ուղղած դիտողութիւններուն և բողոքներուն, ու այդ վերջնոյն խօսքումը թէ պիտի թոյլատրուի ջայերու գաղթումը Թուրքիայէն պարզ խաբէութիւն մը կը թուի ըլլալ։ Ամերիկայէն Պ. Մօրկընթաուի ղրկուած 20,000 ոսկիի գումարը ի նպաստ Հայերուն գործածելու համար ո և է միջոց ու դիւրութիւն չէ տրուած ցարդ Թուրք կառավարութեան կողմէ, որով դեսպանը զոհերուն օգնելու բացարձակ անկարողութեան մատնուած է։ Գերմանիա ամենափոքր տրամադրութիւն մը անգամ չի ցուցներ միջամտելու Բ. Դրան մօտ»։

—«Էքօ տը Բառի» կը գրէ թէ յունական պաշտօնական լուրի մը համաձայն՝ Պուլկարիա Թուրք իշխանութեանց յանձներ է պատերազմին սկիզբէն ի վեր զինուորագրութենէ փախած և Պուլկարիա ապաստանած Ցոյները և այլ ցեղերու պատկանող քրիստոնեաները։«Այս դաւաճանութեան պատիժը սոսկալի պիտի ըլլայ» կ'աւելցնէ Ֆրանսական Թերթը։ Կարելի է երեւակայել թէ ի՛նչ պիտի ըլլայ աւելի պատիժը, ինչպէս կարելի է ենթադրել որ «այլ ցեղերու պատկանող քրիստոնեաներ»ը մեծ մասամբ կը բաղկանան Հայերէ...։

Բու ցարդ ասպնջական և հայասէր երկիրդ ալ, ո՜վ Պուլկարիա, մեզի համար երկարաձգումը պիտի ըլլայ եղեր Թրքական անբծապարտ հոգին, մէկ մասնաճիւղը այն դժոխքին ուր վառելու վրայ են մեր ցեղը, որուն բախտակիցն էիր հազիւ քանի մը տասնեակ տարիներ առաջ....։

Մարզուանեն նամակ մը.—Թանթայէն բարեկամ մը կը հաղորդէ մեզ թէ իր կինը, որ բնիկ Մարզուանցի է, Սեպտ. 15]28 Թուականաւ հետեւեալ կարճ նամակը ստացած է Մարզուանէն.

«Երեք ամիսէ ի վեր է որ ձեր նամակը ստացած ենք. ես, մայրս, Աղնիւը և իր երեք զաւակները և փոքր եղբայրս հոս ենք. կը յուսանք որ դուք ալ աղէկ էք և պիտի գրէք մեզի կարելի եղածին չափ շուտ. հաճեցէք մեզի դրամ ղրկել»։

Այս նամակը պարզող ակնարկ կը հետեւցնէ թէ, քանի որ մօրը, քրոջը և փոքր եղբօրը մասին միայն յիշատակութիւն եղած է անոր մէջ, ուրեմն իր բազմանդամ ընտանիքին միացեալ անդամները, մասնաւորապէս բոլոր այրերը՝ որոնց մէջ մինչև իսկ կային ծերունիներ կան և որոնք մինչև Ցունիսի սկիզբը ողջ էին, տարագրուած են։ Իսկ դրամ ուզելէն կարելի է խորհիլ թէ Մարզուանի տուներն ալ փճացուած են, քանի որ դրամի պէտք ունեցող անձեր չէին անոնք։ Միակ ազդակ հետեւութիւնը այս նամակէն այն է՝ թէ Մարզուանի մէջ կան ողջ մնացած Հայեր, հաւանօրէն միայն կիներ և տղաքներ, որոնք ապրելու համար օգնութեան պէտք ունին։ Կը մնայ գտնել այդ օգնութիւնը հասցնելու միջոցը։

ՀԻՄՆԴՐԱՄ
ԱԶԳ. ՇԱՀԵՐՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

(Ցուցակ Գահիրէի)

Տեարք՝	Ե. Գ.
Իշխանեան եղբ.	400
Մ. Մանուկեան (Աղեքս.)	400
Գ. Գրմզըմեան	300
Ն. և Լ. Կիւզէլիմեան	200
Օր. Փայլածու Աժտէրեան	2.0
Ն. Զաքըճեան (տարեկան)	200
Ց. և Ա. Հաճեան (Աղեքս.)	100
Մ. Գրիգորեան	100
Տիկ. Արաքսի Աժտէրեան	100
Մ. Աժտէրեան	100
Մ. Շահպազեան	50
Մ. Ֆէրաչէթեան	50
Տօքթ. Ս. Մարդարեան	50
Ց. Թուխմանեան (Աղեք.)	20
	2270
Նախորդ գումար	147.001.7
	149.271.7

«Սուէտիոյ դիւցազներգութիւնը» եւ «Պալքանեան տագնապը» յօդուածներուն շարունակութիւնները յաջորդ թիւով։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐԵՐ

60000 ՊՈՒԼԿԱՐՆԵՐՈՒ ՓԱԽՈՒՍՏԸ

Սելանիկ, 25. — Ֆրանս. զինուորները, երէկ, Կրատէձ-Վալանտօվօ-Ստրումիցա ճակատին վրայ 3 պուլկար զօրաբաժիններու վրայ (60,000 հոգի) յարձակելով զանոնք ցիրուցան վիճակի մէջ դէպ ի Սերպօ-պուլկար սահմանագլուխը մղեցին։ Ֆրանսացիք տասնեակ մը մեռեալներ և մէկ քանի տասնեակ ալ վիրաւորներ ունեցան։ Պուլկարները 75հոգի կրակէն ջարդուելով ծանր կորուստներ կրեցին։ Հ.

Պրինտիզի, 25. — Անթէնէ հեռագրով կ'իմացնեն թէ իտալական տորմիղ մը պուլկարական ծովեզերքի ռմբակոծման և պլօքիւսին գործադրելու վրայ է։

Սերպիական ճակատէն

Աթէնք, 25. — Նիշէն 24 Թուականով կ'իմացնեն թէ Աւստրօգերման յարձակողականը ամբողջ հիւսիսային ճակատին վրայ կասեցուած է։ Բօզարէվաչի հարաւակողմը Սերպերը մէկ քանի քիլոմէթր հոդ քաշուեցան։ Մակեդոնական ճակատին վրայ Պուլկար ստորումը նոյնպէս կասեցուած է Ֆրանս. բանակին սերպիականին հետ միասին կատարած շարժումներովը։ Հ.

60000 ԳԵՐՄԱՆ ԿՈՐՈՒՍՏ

Բարիզ, 24. — Աթէնքէն հեռագիր մը կ'ըսէ թէ Նիշէն վարչապետ Պ. Բաշիչի ստորագրութեամբ հեռագրաշարք մը համեմատ Զօր. Մաքէնզընի բանակին կորուստները առնուազն 60000 հոգի են։ Նիշ հասնող Ֆրանս. և անգլ. զինուորական կցորդները կը հաստատեն թէ Վրանիա դեռ գրաւուած չէ։ Պուլկարները որոնք հեծելազօրքի պարզ արշաւանք մը փորձած էին հոն, ետ մղուեցան։ Զինուոր. կցորդները կը յայտարարեն թէ սերպ զինուորները պուլկարական հողը մտած են։ Ռ.

Աթէնք, 25. — Դաշնակից սպաներու տորմիղներ դարձեալ Տէտէաղաճի և Բօրթօ Լակօսի վրայ յարձակելով զինուորական տեսակէտով կարեւոր վնասներ պատճառեցին։ Ռ.

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Աթէնք, 25. — Պ. Վէնիզէլոս Աթէնք վերադառնալով իր կուսակիցները ժողովի հրաւիրեց։ Ռ.

Արեւելեան ճակատէն

Լոնտոն, 24. — Բեթրոկրատէն ոչ-պաշտօնական լուրեր կ'իմացնեն թէ պատերազմի տագնապալի շրջանը վերջացած է և թէ Ռուսք այս միջոցիս ամենուրեք նախայարձակ են։ Մօք.

Լոնտոն, 25. — Պէրլինէն զեկոյց մը կ'ընդունի թէ ռուսական ստուարաթիւ ուժեր աւելի նուաղ թիւով գերման ուժերու քաշուիլ ստիպած են Իլլիւքէն և ռուսական ճակատին ուրիշ կէտերէն։ Զեկոյցը ի վեր կը հանէ ուժգնութիւնը ռուսական յարձակումներուն որոնք Գերմանացւոց կողմէ ետ մղուած են կ'ըսէ։ Ռ.

Իտալական ճակատէն

Հռոմ, 25.— Զեկոյց մը կ'իմացնէ թէ կիրակի օրը Իտալացիք Կարսօ և Ատիժի լճին միջև Ալթիսիմօյի լեռնէն վար իջած և թշնամի երկու մարտկոցներու խաչաձև կրակին տակ՝ գրոհով մը գրաւած են երկու դիրքեր որոնք Ռիվայէն Մօրի տանող ճամբան կը կալմեն։ Իտալացիք թշնամի խրամներուն մէջ առատ նիւթեղէններու տիրացան։ Ռիվէնձի հովիտին մէջ թշնամւոյն գիշերային երեք յարձակումները ետ մղուելով թշնամին փախուստի մատնուեցաւ և մինչև իր խրամները Իտալացւոց կողմէ հետապնդուեցաւ։ Մրձլիի մէջ թշնամին երկու յարձակումներով յաջողեցաւ Իտալ. դիրքը մտնել, բայց Ալբէնները կորսուած խրամները վերագրաւեցին։ Իտալացիք 300 գերի Թաղեցին և բազմաթիւ գերիներ բռնեցին։ Իտալացիք Բլավայի շրջանին մէջ նոյնպէս գրոհով մէջ ամուր խրամ մը գրաւեցին։ Ռ.

Հռոմ, 25. — Պատերազմի սկզբնաւորութենէն մինչև պատերազմի վերջ. բորդ ամիսը Աւստրիացի գերիները 28000ի կը բարձրանան՝ ի փոխարէն միմիայն 1000 Իտալացի գերիներու։ Ռ.

Թուրքիոյ մէջ

Լոնտոն, 25. — Երեսփ. Ժողովոյ նախագահ Հալիլ պէյ, արտ. գործոց նախարար անուանուած է. մինչև հիմա այդ պաշտօնը արժանապէս մեծ եպարքոսը կը վարէր։

Ամսթերտամ, 25. — Պոլսէն հեռագիր մը լուր կուտայ թէ Պոլսոյ նախկին գերման դեսպան Պ. Վանկէնհայմ կարճ հիւանդութենէ մը վերջ մեռած է։ Ցիշեալը Կէօպէնի և Պրէսլաուի Պոլիս մտնելուն և անոր հետեւանքներուն պատասխանատուն եղած է։ Ռ.

Արեւմտեան ճակատէն

ՖՐԱՆՍ. ՅԱՋՈՂՈՒԹԻՒՆ

Բարիզ, 25.—Շամբանիի մէջ Գերմանական յառաջամասի մը տիրացանք՝ որ «Լա Քուրթին» անուանեալ ամենակարեւոր ամրութիւնը կը պարունակէր, բռնկացնել խրամատային չորս ամուր գիծերէ։ Երեք տարբեր զօրագունդերու պատկանող գերիներ բռնեցինք։ Գերման կորուստները ծանր եղան։ Ռ.

ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

Սերպիական ճակատէն

Արեւմն, 27. — Սերպերը յամառ կռիւէ մը վերջ Վելեսը (Քէօփրիւլիւ) գրաւեցին։

Բարիզ, 26.— Պուլկարները Հոկտ. 22ին Ստրումիցայի շրջանին մէջ գտնուող Ֆրանս. ուժերուն վրայ յարձակեցան, բայց Ֆրանսացիք բռնաբար կատարելապէս պարտութեան մատնեցին։ Ռ.

ՍԵԼԱՆԻԿԻ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

Լոնտոն, 20. — Լորտերու ժողովին մէջ Լորտ Լորպըրն հարցուց թէ արդեօք կառավարութիւնն եւ իր նաւային ու իր զինուոր. խորհրդականները գո՞հ էին Սելանիկի զին. առաջման վերաբերմամբ, եւ արդեօք կատարելապէս հոգացուա՞ծ էր յարաբերութեանց եւ օգն. զօրք եւ ռազմանիւթ ղրկուելու խնդիրը: Լորտ Լէնստաուն պատասխանեց թէ Պ. Վենիզէլոսի խնդրանքին վրայ որոշուած այս առաջումը՝ պէտք է նկատուի իբրեւ յառաջապահը աւելի կարեւոր ուժերու: Յունաստան իր դաշնագրին համաձայն չգործելով՝ բանակին Սերպիոյ մէջ յառաջացմանը ազդեց: Անգլ. եւ Ֆրանս. զին. ու նաւային խորհրդականները կացութեան մասին խորհրդակցելու վրայ են: Կառավարութիւնը պիտի զգուշանայ անապաստանօք գործելէ, այլ ամէն մէկ միջոցի համար լաւագոյն զին. կարծիքը պիտի առնէ։ Ռ.

Արեւմտեան ճակատէն

Բարիզ, 26 (Անբել Հ.). — Կռիւը խալ առ խալ շարունակուեցաւ Շամբանիի մէջ Լա Քուրթինի կեդրոնը, փոքր դիմադրումներով: Մեր զինուորներու յամառ դիմադրութիւնը եւ յանկարծակի յարձակողականը թշնամւոյն հակայարձակումներու ճիգերը բեկանեցին: Մասիժի հիւս.-արեւելեան կողմը փութկոտ յարձակումով մը մեր նոր գրաւած դիրքերուն մօտ եղող Գերման խրամի մը տիրացանք:

Բարիզ, 27.— Երեսփ. Ժողովոյ նըրբանցքները ծայրայեղօրէն ոգեւորուած են: Նախարարական փոփոխութեան մը մասին կը խօսուի, որ հիմա հաւանական կը նըկատուի: Հ.

ԱՆԳԼԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Բարիզ, 27.— Պ. Բուանքարէ Պ. Միլլրանի ընկերակցութեամբ կիրակի օրը բանակ մեկնեցաւ, ուր հանդիպեցաւ Ճորճ թագաւորին որ բրիտանական բանակը այցելու եկած: Երեքշաբթի իրիկուն թագաւորը եւ Կալլէսի իշխանը Ֆրանս. բանակները այցելեցին եւ ներկայ գտնուեցան զաղբային բանակներուն փառաւոր մէկ տողանցքին: Պ. Բուանքարէ Կալլէսի իշխանին տուաւ Պատերազմի խաչը: Հ.

Լոնտոն, 26. — Ճորճ թագաւորին Ֆրանսա գալուստին ամենամեծ կարեւորութիւն կ'ընծայուի: «Էքօ տը Բարի» կ'ըսէ թէ պատերազմին տեւողութիւնը մեծ մասամբ կախում պիտի ունենայ տրուելիք որոշումներէն եւ անոնց արագ գործադրութենէն: Ճորճ թագաւորին Ֆրանսայի մէջ ունենալիք խօսակցութիւնները անգնահատելի ծառայութիւն մը պիտի մատուցանեն Դաշնակիցներու դատին: Ռ.

Արեւմն, 27.—Անգլ. ընդծովեայ մը Մարմարայի մէջ ռազմամթերք բեռցած «Բարմեն» փոխադրանաւը ընկղմեց: Հ.

Հռոմ, 26. — Աւստրիական օդանաւեր Վենետիկը ռմբակոծեցին: Ռումբերը «Տէգլի Սքալձի» եկեղեցւոյն վրայ իյնալով Թիէբօլօյի որմանկարը քանդեցին: Հ.

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՔՐԷՏԻ ՖՕՆՍԻԷ

16 Հոկտ. 1915ի վիճակահանութիւնը

1886ի պարտատոմսեր

Ա. ՊԱՐԳԵՒ, Ֆր. 100,000 Թիւ 189,762

Հետեւեալ 25 Թիւերը կը շահին 1000ական Ֆր.

1263	112797	195292	239512	291477
6129	153594	224089	250028	297505
10096	166217	231083	253690	312618
53645	171529	231161	275313	391214
112250	185583	231539	278736	393491

1903ի պարտատոմսեր

Ա. ՊԱՐԳԵՒ, Ֆր. 100,000 Թիւ 572,997

Հետեւեալ 25 Թիւերը կը շահին 1000ական Ֆր.

407307	476703	543572	573220	706837
417304	477839	561238	624139	714651
427326	492830	564608	628180	726633
450288	507407	571766	671654	732550
459319	515355	572173	682284	778086

1911ի պարտատոմսեր

Ա. ՊԱՐԳԵՒ, Ֆր. 50,000 Թիւ 10,301

Ֆր. 10,000 Թիւ 214,122

Հետեւեալ 24 Թիւերը կը շահին 1000ական Ֆր.

10877	69944	132450	196382	332384
11113	81174	140735	243565	364979
49552	83236	147883	263395	388410
55944	125078	173441	271502	396450
62218	131149	196241	312948	

ԽՆԱՅՈՂԱԿԱՆ Տպարան
Մ. ՏԱՄԱՏԵԱՆ
Imp. Economique, Alex.

ՍԱԿԱՐԱՆ

27 Հոկտեմբեր 1915

ԲԱՄՊԱԿ		Բացում	Փակում
	Նոյ.	18 11]32	18 5]8
	Յունվար	18 23]32	18 1]2
	Մարտ	18 7]8	18 7]8
	Նոյ.(1916)	18 1]8	18
ԲԱՄՊԱԿԻ ՀՈՒՆՏ			
	(3 ամիս)	104	104 20]40
	(2 ամիս)	106	107

ԱՐԺԵԹՈՒՂԹ

Դրէտի Ֆօնսիէ 1886	Ֆր. 288.50
» » 1903	» 236.50
» » 1911	» 245.50
Ռումէլի Երկաթուղի	» 131.—
Բանանա	» 91.50